Մտքով չէր անցել հարցնել և դեռ նրան մտահոգում էր այն, որ գուցե հնարավոր էր՝ քսան րոպեի, կես ժամի դիմաց, ամբողջը, քահանայի ամեն բառը, որ լսել էր թաղման ժամանակ, և ամբողջ ասելիքը, տեսնել փորագրված իր փոքրիկի գերեզմանին: Բարեհոգի Սիրեցյալ: Բայց պայմանավորվեց ստանալ միակ բառը, որը կարևոր էր: Մտածեց, որ այն հերիք է, վազվզելով մի գերեզմանաքարից մյուսը, փորագրող վարպետի և նրա երիտասարդ որդու հայացքի հետ մեկտեղ, որի մեջ վաղեմի զայրույթ և բոլորովին նոր ախորժակ կար: Այն հաստատ հերիք էր: Հերիք էր ևս մեկ քահանայի, ևս մեկ արդիցիոնիստի և նողկանքով լցված քաղաքի պատասխան տալու համար:

Հույսը դնելով իր իսկ հոգու հանդարտության վրա, նա մոռացել էր այն մեկը՝ իր փոքրիկ աղջկա հոգին: Ու՛մ մտքով կանցներ, որ վաղեմի փոքրիկ երեխան կարող էր այդքան զայրույթ տաժել: Փորագրողի որդու աչքի առաջ, գերեզմանաքարերի արանքում շնանալը բավարար չէր: Ոչ միայն պիտի անցկացներ իր տարիները կտրած կոկորդով կատաղությունից անդամահատ եղած տանը, այլ նաև այն տաս րոպեն՝ ճզմված արշալույսով երանգավորված քարին, պատված աստղաձև բեկորներով, ծնկները լայն բացված գերեզմանի պես, կյանքից երկարատև էին, ավելի կենդանի, ավելի թրթռուն քան երեխայի արյունը, որ ձեթի պես ներծծվել էր մատների մեջ:

- Մենք կարող էինք տեղափոխվել, - մի անգամ առաջարկեց ամուսնու մորը:

- Իմա՛ստը - ասաց Բեյբի Սագգը: - Ոչ մի տուն իր գերաններին կապված չէ ինչ-որ մեռած նեգրի վշտով: Մեր բախտը բերել է, որ ուրվականը երեխա է: Բա ո՞ր իմ ամուսնու հոգին գար էստեղ,

կամ քո: Էլ բան չասես, բախտավոր: Դու դեռ երեքն ունես: Երեքը փեշերիցդ են քաշում ու միայն մեկն է դժողք սարքում մյուս կողմից: Ինչի՞ շնորհակալ չես լինում: Ես ութն ունեի: Բոլորին ինձնից վերցրին: Չորսին տարան, չորսին որսացին, ու ինձ թվում է, ամեն մեկը ինչ որ մեկի տունը չարիքով է լցնում: Բեյբի Սազգն հոնքերը տրորեց:

- Իմ առաջնեկը: Միակ բանը, որ հիշում եմ իրենից, թե ոնց էր սիրում հացի վառված կողմը: Ուղեղումդ տեղ անու՞մ է: Ութ երեխա ու միակ բանը, որ հիշում եմ:

- Միակ բանը, որ թույլ ես տալիս քեզ հիշել,- Սեթան ասել էր նրան, բայց նա էլ միայն մեկն ուներ: Տղաները՝ քշված մեռածի կողմից և Բյուզերի մասին նրա հիշողությունը արագ էր մարում: Թերևս Հովարդի գլխի ձևը մոռանալ չէր լինի: Ինչ վերաբերվում է մնացածին, նա ջանում էր ապահով լինելու համար հիշել գրեթե ոչինչ: Դժբախտաբար, նրա ուղեղը շեղվող էր: Նա կարող է իջներ դաշտով, գրեթե վագելով, արագ ջրհանին հասնելու համար ու լվանար երիցուկի բուսահյուրը ոտքերից: Էլ ոչինչ մտքում չէր լինի: Իր մասին հոգ տանող տղամարդկանց պատկերը նույնքան մեռած էր, որքան մեռած էին ջղերը մեջքի՝ որի մաշկը լվացքի տախտակի պես ծալապատ էր: Չնչին անգամ չկար նաև հոտը թանաքի կամ բալի ծառի խեժի ու կաղնու կեղևի, որոնցից այն պատրաստված էր: Ոչինչ: Միայն գեփյուռն էր հովացնում դեմքը, դեպի ջուրը վագելիս: Այուհետև, երբ ջրհանի ջրով ու լաթով լվանում էր բուսահյուրը ոտքերից, միտքը կենտրոնանում էր այն ամբողջովին մաքրելու վրա, կես մղոն քիչ քայլելու համար կարճ ուղով գնալու իր անփութության վրա, չնկատելով ինչքան բարձր են մոլախոտերը, քանի դեռ քորը մինչև ծնկները չէր հասնում: Ապա մի բան: Ջրի ճղփյունը, տեսարանն իր կոշիկների ու գուլպաների՝ ընկած ճանապարհի վրա, որտեղ թողել էր, կամ Ստեղ Տղան չփիացնում էր ջրափոսի մեջ, իր ոտքերի մոտ և հանկարծ ահա Ջերմ Տունը գլոր, գլոր, գլորվում էր աչքի դիմաց և թեպետ չկար գեթ մեկ տերև այդ ֆերմայում, որ չստիպեր նրան գոռալու կարիք գգալ, այն գլորվում էր նրա առջև իր անամոթ գեղեցկությանը: Այն երբեք իրեն այսչափ սարսափելի չէր թվացել և ուզում էր իմանալ, միթե դժողքը նույնպես հմայիչ էր: Կրակ ու ծծումբ, բայց հյուսված անտառի գրկում: Տղաներ՝ կախված աշխարհի ամենագեղեցիկ ժանտաթզենիներից: Նա ամաչում էր նրանից, որ հիշում էր հիասքանչ սոսափող ծառերը տղաների փոխարեն: Ինչքան էլ փորձեր հակառակն անել, թզենիներն ամեն անգամ անցնում էին տղաներին և նա իր հիշողությանը ներել չէր կարողանում դրա համար:

Երբ երիցուկն ամբողջովին մաքրվեց, նա քայլեց դեպի տուն՝ ճանապարհին հավաքելով կոշիկներն ու գուլպաները: Կարծես սոսկալի հիշողության համար իրեն առավել պատժելու



համար, նախասրահում, մոտ քառասուն ոտնաչափ հեռավորության վրա, նստած էր Փոլ Դին՝ վերջինը Ջերմ Տան տղամարդկանցից: Ու թեպետ երբեք նրա դեմքը ուրիշինի հետ չէր շփոթի՝ Սեթան հարցրեց, «Այդ դո՞ւ ես»:

«Այն ինչ մնացել է ինձնից»: Տեղից վեր կացավ ու ժպտաց: «Ո՞նց ես մինչև հիմա եղել, բացի ոտաբորիկ լինելուց»:

Երբ Սեթան ծիծաղեց, նրա ծիծաղը հնչեց ազատ ու ջահել: «Ոտքերս կեղտոտել էի, էնտեղ հետևում: Երիցուկներն էին»: Փոլ Դինի դեմքը փոխվեց, կարծես մի գդալ դառնություն փորձած լիներ:

- Չեմ ուզում անգամ լսել դրա մասին: Միշտ ատել եմ էդ բանը:

Սեթան գուլպաները կծիկ արեց ու խցկեց գրպանը:

- Արի ներս:

- Նախասրահը լավ է, Սեթա: Էստեղ հով է: Նա դարձյալ նստեց և հայացքն ուղղեց փողոցի մյուս կողմի մարգագետնին, իմանալով, որ իր զգացած ջերմությունը կերևար աչքերում:

- Տասնութ տարի, - Սեթան մեղմ ասաց:

- Տասնութ, - Փոլ Դին կրկնեց: - Ու ազնիվ խոսք նրանցից ամեն մեկը քայլելով են անց կացրել: Դեմ չե՞ս, միանամ: Գլուխը թեքեց դեպի նրա ոտքերն ու սկսեց կոշիկներն արձակել:

- Ուզում ես թրջե՞լ: Մպասի քեզ համար մի աման ջուր բերեմ:

Նա մոտեցավ Փոլ Դինին, որպեսզի տուն մտնի:

- Չէ, ըհմ, ըհմ: Չեմ կարող փայփայել: Դեռ ահագին թափառելու են:

- Չեմ թողնի միանգամից մեկնես, Փոլ Դին: Մի քիչ պիտի մնաս:

- Դե, համենայն դեպս էնքան, որ տեսնեմ Բեյբի Սազզին: Ո՞ւր է նա:

- Մեռած:

- Մի ասա, չէ՛: Ե՞րբ:

- Արդեն ութ տարի է, համարյա ինը:

- Դժվա՞ր էր: Հուսամ, դժվար մահ չի ունեցել:

- Սերուցքի պես թեթև: Դժվարն ապրելն էր: Ափսոս, որ չհանդիպեցիր նրան: Դրա համա՛ր էիր եկել:

- Դրա համար էլ: Բայց նաև քո համար: Իսկ եթե մինչև վերջ ճիշտն ասեմ, հիմա ամենուր եմ գնում: Ամենուր, ուր ինձ ներս կընդունեն:

- Տեսքդ լավ է:

- Սատանայի խաբկանքն է: Թողնում է լավ տեսք ունենամ, քանի վատ եմ զգում: Նա նայեց Սեթային, և «վատ» բառը այլ իմաստ ստացավ:

Սեթան ժպտաց: Ահա, միշտ էլ այսպիսին էին եղել: Ջերմ Տան բոլոր տղամարդիկ, Հելիից առաջ ու հետո, վերաբերվում էին նրան թեթև եղբայրական սիրախաղով, այնքան աննկատ, որ անհրաժեշտ էր քերել այն:

Չհաշված մի փունջ ավել մազն ու սպասումն աչքերի, նա նույնն էր, ինչ Քենթափում: Դեղձի կորիզի գույն ունեցող մաշկ, ձիգ մեջք:

Անշարժ դեմքով մարդու համար, զարմանալի էր, թե որքան պատրաստակամ էր այն ժպտալ, շողալ, ցավել քեզ հետ: Կարծես միակ բանը, որ անհրաժեշտ էր անել՝ նրա ուշադրությանը դիպչելն էր և նա անմիջապես կընդուներ այն զգացումը, որը դու էիր զգում: Կես թարթելուց իսկ, նրա դեպքը կարծես կփոխվեր, նրա ներքո շարժումն էր:

- Հարցնելու կարիք չկա, չէ՞: Դու կասեիր, չէ՞, եթե ինչ-որ բան լիներ: Սեթան հայացքը զցեց ոտքերին ու նորից մոլաթղենիներ տեսավ:

- Կասեի: Հաստատ կասեի: Ես հիմա առավել ոչինչ չգիտեմ, քան առաջ գիտեի:

Բացի խնոցուց, նա մտածեց, բայց դա քեզ պատմելու կարիք չկա: - Դու երևի մտածում ես, թե դեռ ողջ է:

- Չէ: Կարծում եմ մեռած է: Իմ հաստատ իմանալը նրան կենդանի չէր դարձնի:

- Բեյքի Սա՞զգն ինչ էր մտածում:

- Նույնը: Բայց եթե նրան լսես, իր բոլոր երեխեքը մեռած են: Պնդում էր, որ նրանց գնալու ճիշտ օրն ու ժամը զգացել է:

-Հելի՞ն էրք էր գնացել իր ասելով:

- Հազար ութ հարյուր հիսունհինգին: Նույն օրը, երբ երեխես ծնվեց:
  - Ի վերջո ունեցար այդ երեխուն, հա՞: Երբեք չէի մտածի, որ կկարողանաս: Քթի տակ ծիծաղեց: - Հղի վիճակում փախնել:
  - Ստիպված էի: Սպասել չէր լինի: Սեթան գլուխը կախեց ու մտածեց, ինչպես և Փոլ Դին, թե որքան անհավանական էր, որ կարողացել էր: Ու եթե այն աղջիկը թավիշ փնտրելիս չլիներ, նա երբեք էլ չէր կարողանա:
  - Ու մենակդ, էն էլ: Փոլ Դին հպարտ էր նրանով, բայց նաև սրտնեղած: Հպարտ էր, որ կարողացել էր ունենալ, սրտնեղած, որ Հելիի կամ իր կարիքը չէր ունեցել ունենալիս:
  - Գրեթե մենակս: Ոչ լիովին: Մի սպիտակ աղջիկ օգնեց:
  - Ուրեմն ինքն իրեն էլ է օգնել, Աստված նրան օրհնի:
  - Կարող ես այս գիշեր մնալ, Փոլ Դի:
  - Մի տեսակ շատ վստահ չես առաջարկում:
- Սեթան նրա ուսի ետևից հայացք նետեց փակ դռանը:
- Չէ, ես իսկապես եմ ասում: Մենակ հույս ունեմ կներես տանս վիճակը: Ներս արի: Դենվերի հետ խոսիր, մինչև քո համար ուտելու մի բան պատրաստեմ:
  - Փոլ Դին կոշիկներն իրար կապեց, զցեց ուսին ու հետևեց Սեթային դռնով դեպի կարմիր լույսի ծփացող ավազանը, որը կապեց նրան կանգնած տեղում:
  - Հյուրեր ունենում ես, - շնջաց, մռայլվելով:
  - Մեկ-մեկ, - ասաց Սեթան:
  - Աստված իմ: Նա վերադարձավ հետ նախասրահ: - Էս ի՞նչ չարիք կա էստեղ:
  - Չարիք չկա, ուղղակի տխուր է: Դե, ուղղակի ներս արի:

Այդ պահին նա ուշադիր Սեթային դիտեց: Ավելի ուշադիր, քան երբ թաց ու պսպղացող ոտքերով տան շուրջն էր պտտվում, կոշիկներն ու գուլպաները մի ձեռքում, փեշը մյուսում: Հելիի աղջիկը: Երկայթե աչքերով ու ողնաշարով: Քենթաքիում երբեք մազերը չէր տեսել: Ու թեև նրա դեմքը հիմա տասնութ տարով ավելի ծեր էր, քան երբ վերջին անգամ տեսել էր, հիմա այն ավելի մեղմ էր

մագերի շնորհիվ: Նրա դեմքը չափազանց հանդարտ էր սփոփանքի համար, ծիածանաթաղանթները մաշկի նույն գույնն ունեյին ու այդ հանդարտ դեմքին, հիշեցնում էին դիմակ՝ դուրս ցցված աչքերով: Հելիի կինը: Ամեն տարի հղի, ներառյալ այն մեկը, երբ կրակի մոտ նստած պատմեց իրեն, որ պատրաստվում էր փախչել: Իր երեք երեխաներին արդեն տեղավորել էր գետն անցնող ներգրերի քարավանի վագոններից մեկում: Պիտի մնային Հելիի մոր մոտ, Սինսինթերում: Նույնիսկ այդ փոքր հյուղակում, կրակին այդքան մոտ հակված՝ կարող էր զգալ Սեթայի զգեստի միջի տաքության հոտը, նրա աչքերը չէին որսում լույսի ցուրը: Դրանք նման էին երկու ջրհորի, որոնց նայելն իրեն անհարմար էր: Նույնիսկ դուրս ցցված, նրանց հարկավոր էր ծածկել, խուփով փակել, վրան, նշան դնել ժողովրդին զգուշացնելու համար՝ թե ինչ էր պարունակում այդ դատարկությունը: Այնպես որ Փոլ Դին փոխարենը նայում էր կրակին, մինչ Սեթան կպատմեր, քանի որ նրա ամուսինն այնտեղ չէր պատմելու գործն անելու համար: Պարոն Գարները մահացել էր, իսկ նրա կինը կոկորդին գետնախնձորի չափ ուռուցք ուներ ու ի վիճակի չէր որևէ մեկի հետ խոսել: Սեթան հակվեց դեպի կրակը, որքան իր որովայնի մեծությունը թույլ կտար և պատմեց Փոլ Դինն՝ Ջերմ Տան վերջին տղամարդուն:

Վեցն հոգով էին պատկանում ֆերմային՝ Սեթան միակ կինը: Տիկին Գարները երեխայի պես լաց լինելով վաճառել էր իր եղբորը, վճարելու համար այն պարտքերը, որոնք սկսեցին կուտակվել այն պահից, երբ նա դարձավ այրի: Ապա վարժապետը ժամանեց ամեն բան իր տեղը դնելու համար: Բայց այն ինչ արեց՝ Ջերմ Տան ևս երեք տղամարդու կոտորելն ու Սեթայի աչքերի երկաթե կայծը դուրս հանելն էր, փոխարենը թողնելով երկու բաց ջրհոր, որոնցում կրակի լույսը չէր արտացոլվում:

Հիմա երկաթը հետ էր լցվել, բայց դեմքը, մագերից մեղմացած, ստիպում էր բավականաչափ վստահել իրեն, ներս մտնել դռնով ու շապացնել կարմիր լույսի ավազանի մեջ:

Սեթան ճիշտ էր: Տխուր էր: Քայլելով նրա միջով, վշտի մի ալիք ամբողջապես թրջեց նրան, այնպես թրջեց, որ լաց լինելու ցանկությունն արթնացավ: Սովորական լույսին հասնելու ուղին շատ երկար էր թվում, բայց նա անցավ՝ չոր աչքերով ու հաջողությամբ:

- Ասեցիր որ, թեթև մահ է ունեցել: Սերուքքի պես թեթև, - Փոլ Դին հիշեցրեց:

- Դա, Բեյբի Սագգը չէ,- ասաց Սեթան:

- Բա ո՞վ:

- Աղջիկս: Այն մեկը, որը տղաներից առաջ հեռացավ:

- Նա չսպրե՞ց:

- Չէ: Այն մեկը, որով հղի էի, երբ փախա, միայն նա է մնացել: Տղաներն էլ են հեռացել: Երկուսն էլ ճամփա ընկան Բեյբի Սագգի մեռնելուց առաջ:

Փոլ Դին նայեց այն տեղին, որտեղ վիշտը թրջել էր իրեն: Կարմիր լույսն էլ չկար, բայց դրա փոխարեն օդից մի տեսակ ողբ էր կախվել:

Երևի էդպես ավելի լավ էր, Փոլ Դին մտածեց: Նեգրին ոտքերը տրված են օգտագործելու համար: Երկար նստես, ինչ-որ մեկը մի ձև կգտնի դրանք կապելու: Բայց դե... էթե նրա տղաները գնացել էին...

- Առանց տղամա՞րդու: Էստեղ մեն-մենա՞կ ես:

- Ես ու Դենվերն ենք,- ասաց Սեթան:

- Քեզ համար լավ է էդպես:

- Լավ է էսպես:

Սեթան նկատեց նրա թերահավատությունը ու շարունակեց:

- Ես քաղաքի ռեստորանում խոհարար եմ ու թաքուն մի քիչ կար եմ անում:

Այդ պահին Փոլ Դին ժպտաց, հիշելով ամուսնական առաջին օրվա զգեստը: Սեթան տասներեք տարեկան էր, երբ Ջերմ Տուն եկավ, ու արդեն երկարթե աչքեր ուներ: Նա ճիշտ ժամանակին արված նվեր էր Տիկին Գարներին, ով կորցրել էր Բեյբի Սագգին իր ամուսնու բարձր սկզբունքների պատճառով: Ջերմ Տան հինգ տղամարդիկ նայեցին նոր աղջկան ու որոշեցին նրան հանգիստ թողնել: Նրանք երիտասարդ էին ու այնքան զգված կանանց բացակայությունից, որ անցել էին հորթերին: Այդուհանդերձ, նրանք երկարթե աչքերով աղջկան հանգիստ թողեցին, որպեսզի նա ընտրեր, թեպես նրանցից ամեն մեկը մյուսներին կջարդեր նրան ունենալու համար: Նրանից մի տարի պահանջվեց ընտրելու համար: Սեթայի մասին երազներով հագեցված, ծղոտե ներքնակների վրա շուռուճուճ գալու մի երկար, դժվարին տարի: Այդ զսպվածությունը նրանք հավանաբար ցուցաբերում էին միայն որովհետև իրենք Ջերմ Տան տղամարդիկ էին, այն տղամարդիկ, որոնցով պարոն Գարները պարծենում էր, մինչ մյուս ֆերմերները գլուխներն էին տմբացնում ի նշան զգուշացում այդ արտահայտությունից:

- Ձերոնք լակոտներ են, - ասում էր մյուսներին: - Ձահել լակոտներ, ծեր լակոտներ, տզուզան լակոտներ, լպիրշ լակոտներ: Այ, իսկ Ձերմ Տանը, իմ նեգրերը տղամարդ են, իրանցից ամեն մեկը: Տենց գնել եմ, տենց էլ մեծացրել: Տղամարդ, ամեն մեկը:

- Ներող Գարներ, պիտի չհամաձայնեն: Ոչ մի նեգր տղամարդ չի կարա լինի:

- Չի կարա, եթե դու վախենում ես: Գարները լայն ժպտում էր: - Բայց եթե դու ինքդ տղամարդ ես, կուզես, որ քո նեգրերն էլ տղամարդ լինեն:

- Ես ոչ մի նեգր տղամարդու չէի թողնի կնոջս շուրջ ֆոֆոար:

Ահա այն պատասխանը, որին Գարները սիրով սպասում էր:

- Ոչ էլ ես,- ասաց նա,- ոչ էլ ես, և ինչպես միշտ դադար կտիրեր, մինչ հարևանը, անձանոթը, փերեզակը, կամ փեսան կամ մեկ ուրիշը կհասկանար իմաստը: Հաջորդիվ, կատաղի վեճ, երբեմն կռիվ, ու տուն կվերադառնար կապտուկներով ու բավարարվածությամբ, ևս մեկ անգամ ցուցադրած լինելով, թե ով է իսկական Բենթաքեցին՝ մեկն ով բավարար պինդ ու խելոք էր իր նեգրերին տղամարդ կոչելու համար:

Ու նրանք իրոք այդպիսին էին: Փոլ Դի Գարները, Փոլ Ֆ Գարները, Փոլ Ա Գարները, Հելի Սագզը և Սիքսոն՝ վայրի տղամարդը: Բոլորը քսան տարեկանն անց, առանց կանանց, կովերի հետ գուգավորվելով, բռնաբարելու երազանքով, ծղոտե ներքնակներին շուռումուռ գալով, իրենց ազդրերը շփելով ու նոր աղջկան սպասելով: Նրան, ով Բեյբի Սագզին էր փոխարինում, այն բանից հետո, երբ Հելին գնեց մորը իր հինգ տարվա կիրակիների գնով: Գուցե դա էր պատճառը Հելին ընտրելու: Բսան տարեկան տղամարդը, ով այնքան էր սիրում մորը, որ հրաժարվել էր հինգ տարվա հանգստյան օրից, միայն որպեսզի տեսներ նրան նստած, լրջամիտ առաջարկ էր:

Նա մի տարի սպասեց: իսկ Ձերմ Տան տղամարդիկ բռնացան կովերի վրա, քանի դեռ նրան էին սպասում: Նա ընտրեց Հելին ու իրենց առաջին ամուսնական օրվա համար գաղտնի զգեստ կարեց:

- Չես մնա՞ մի որոշ ժամանակ: Ոչ մեկ չի կարա տասնութ տարին մի օրվա մեջ տեղավորի:

Մշուշոտ սենյակից դուրս, որում նստած էին, սպիտակ սանդուղքը տանում էր դեպի երկրորդ հարկի կապտա-սպիտակավուն պաստառը: Փոլ Դիին տեսանելի էր միայն պաստառի սկզբնամասը՝ դեղին աննկատ պուտեր, շաղ տված ձյան փաթիլների առատության մեջ, այդ ամբողջը կապույտի վրա: Աստիճանների ու ճաղաշարքի լուսաշող սպիտակը պահում էր նրա

հայացքն իր կողմ: Իր ամեն զգայարան ասում էր, որ աստիճանավանդակների վերևի օդը կախարդված էր ու շատ նվազ: Բայց աղջիկը, որն այդ օդից միջից իջավ ներքև՝ փարթամ էր, դարչնագույն ու զգոն տիկնիկի դեմքով:

Փոլ Դին նայեց աղջկան, ապա Սեթային, ով ժպտաց՝ ասելով.

- Ահա և իմ Դենվերը: Սա Փոլ Դին է, քաղցրս, Ջերմ Տնից:
- Բարի առավոտ, պարոն Դի:
- Գարներ, ձագ: Փոլ Դի Գարներ:
- Այո, պարոն:
- Ուրախ եմ քեզ տեսնել: Վերջին անգամ մամայիդ տեսնելիս, դու նրա զգեստի առաջամասից դեպի դուրս էին հրում:
- Էլի կանի,- Սեթան ժպտաց,- եթե մեջը տեղ անի:

Դենվերը կանգնած էր ներքևի աստիճանին, ու հանկարծ տաքացավ ու ամաչեց: Արդեն երկար ժամանակ էր, ինչ որևէ մեկը (բարեկամ սպիտակամաշկ կին, քահանա, բանախոս կամ թերթ բաժանող) չէր նստել իրենց սեղանի շուրջ, իրենց կարեկից ձայների սուտը՝ մատնված աչքերի միջի նոխկանքով: Տասներկու տարի, Բեյբի Սագգի մահից շատ առաջ, ոչ մի այցելուներ, առավել ևս ընկերներ չէին եկել: Ոչ մի սևամորթ: Անշուշտ, ոչ մի դարչնագույն մարդ, չափից շատ երկար մազերով ու առանց նոթատետրի, ոչ մի փայտածուխ, ոչ մի նարինջ, ու ոչ մի հարց: Մեկը, ում հետ իր մայրը խոսել կցանկանար, նույնիսկ կխոսեր ոտաբորիկ: Աղջկա տեսք, ու ավելին, պահվածք ուներ այդ մեղմ, ազնվագարմ կինը, ում Դենվերը ճանաչել էր իր ամբողջ կյանքում: Նա, ով երբեք հայացքը չէր շրջել. երբ զամբիկը մի մարդու մահացու չափ կոխկռտել էր ուղիղ Սոյերի ռեստորանի առջև, հայացքը չէր շրջել, ու երբ մատակ խոզը սկսել էր ուտել իր իսկ կեղտը՝ կրկին հայացքը չէր շրջել: Ու երբ երեխայի հոգին վերցրել էր Ստեղ Տղային ու ուժգին զարկել պատին, բավարար ուժգին երկու ոտքը կոտրելու ու աչքերը դուրս հանելու համար, այնքան ուժգին, որ ցնցումների մեջ էր ընկել ու լեզուն ծամել, մեկ է՝ իր մայրը հայացքը չէր շրջել: Նա մուրճ էր վերցրել, շանը մի հարվածով անզգայացրել, սրբել հեռացրել էր թուրքն ու արյունը, աչքը տեղն էր գցել ու ուղղել ոտքի ոսկրերը: Նա ապաքինվել էր, համրացած ու անհավասարակշիռ, ավելի շատ իր անվստահելի աչքի, քան ծուռ ոտքի պատճառով, ու ձմեռ-ամառ, խոնավ ու չոր, այլևս ոչինչ նրան չէր համոզել կրկին տուն ոտք դնել:

Ու ահա այդ կինը, մտքի այդպիսի արթմնիությամբ, որ ցավից կատաղած շանը հետ էր բերել, ծալած ծնկներն էր օրորում ու խուսափում իր դատեր մարմնին նայելուց, որը կարծես ավելի լայնաչափ էր, քան իր տեսողությունը կարող էր ընդունել: Ու ոչ նա, ոչ էլ Փոլ Դին կոշիկներով չէին: Տաքացած, ամաչած, այժմ Դենվերը միայնակ էր: Բոլոր հեռացածները՝ սկզբում երբայրները, ապա նրա Մեծ Մայրը, ծանր կորուստներ էին, քանի որ երեխաներ չկային, որ կընդգրկեին իրեն խաղերում կամ գլխիվայր կկախվեին իրենց սյունասարսի ճաղերից: Այդ ամենը նշանակություն չէր ունեցել, քանի դեռ իր մայրը հայացքն իրենից չէր շրջել, ինչպես հիմա էր անում, դրդելով Դենվերին ամբողջ էությամբ տենչալ, որ երեխայի ուրվականից քենի մի նշան ստանա:

- Բարետես օրիորդ է, - ասաց Փոլ Դին: - Բարետես: Պապայի հաճելի դեմքն ունի:

- Դուք իմ հորը ճանաչու՞մ էին:

- Ճանաչում էի: Լավ էի ճանաչում:

- Ճիշտ է, մա՞: Դենվերը պայքարում էր վերստին կապվելու իր ցանկության դեմ:

- Իհարկե նա ճանաչում էր պապայիդ: Ասեցի քեզ, որ նա Ջերմ Տնից է:

Դենվերը նստեց ամենաներքևի աստիճանին: Վայելչորեն գնալու այլևս ուրիշ տեղ չկար: Նրանք երկյակ էին դարձել: Այնպես էին ասում «Քո պապան» ու «Ջերմ Տունը», որ պարզ էր դառնում, որ դրանցից երկուսն էլ պատկանում էին նրանց, այլ ոչ իրան: Որ իր իսկ հոր բացակայությունը իրենը չէր: Մի ժամանակ, այդ բացակայությունը պատկանել էր Մեծ Մա Բեյբիին. որդի, որին խորապես սգացել էր, քանզի, հենց նա էր գնել իր ազատությունը: Ապա, դա իր մոր ամուսնու բացակայությունն էր: Հիմա, այն այս դարչնագույն անձանոթի ընկերոջ բացակայությունն էր: Միայն նրանք, ովքեր ճանաչել էին նրան (լավ էին ճանաչել), կարող էին համարել նրան բացակա: Ճիշտ այնպես, ինչպես, միայն նրանք, ովքեր ապրել էին Ջերմ Տանը, կարող էին հիշել այն, շնջալ այն ու շեղակի հայացք գցել միմյանց վրա շնջալիս: Կրկին Դենվերը երեխայի ուրվականին էր ուզում՝ նրա գայրույթը հրապուրում էր իրեն, այնպես ինչպես առաջ հոգին էր հանում: Հոգին էր հանում:

- Մենք էստեղ ուրվական ունենք, - Դենվերն ասաց ու դա աշխատեց: Նրանք այլևս երկյակ չէին:

Մայրը դադարեց օրորվելն ու իրեն աղջկական պահելը: Ջերմ Տան հիշողությունները



պակասեցին այն տղամարդու աչքերից, ում համար Սեթան աղջկական էր դարձել: Փոլ Դին կտրուկ հայացքը բարձրացրեց դեպի Սեթայի հետևի լուսաշող սպիտակ աստիճանները:

- Լսել եմ: Բայց մամադ ասում է, որ տխուր է, ոչ թե չար:

- Ոչ, պարոն, - ասաց Դենվերը,- չար չի: Բայց ոչ էլ տխուր:

- Բա ի՞նչ:

- Ջղախն: Միայնակ ու ջղախն:

- Էդպես է՞, - Փոլ Դին դիմեց Սեթային:

- Միայնակի համար չեմ կարող ասել, - ասաց Դենվերի մայրը: - Կատաղած, հնարավոր է, բայց չեմ պատկերացնում, ինչպես կարող է մենակ լինել, եթե ամեն բոլորն մեզ հետ է անցկացնում:

- Երևի քեզնիվ մի բան է ուզում:

Սեթան ուսերը թոթվեց: - Ընդամենը երեխա է:

- Իմ քույրն է, - ասաց Դենվերը: - Էս տանն է մահացել:

Փոլ Դին քորեց ծնոտի տակի մազերը: - Ինձ Ջերմ Տան հետևի էն Անգլուխ Հարսնացուին է հիշեցնում: Հիշում ե՞ս, Սեթա: Սովորություն ուներ հաճախ անտառներում թափառելու:

- Ո՞նց կարող էի մոռանալ: Վախենալու էր:

- Էդ ոնց է՞ լինում, որ Ջերմ Տնից բոլոր փախածները չեն կարողանում դադարեն խոսալ դրա մասին: Եթե Էդքան ջերմ էր, կարող էիք մնալ:

- Աղջիկ, ու՞մ հետ ես Էդպես խոսում:

Փոլ Դին ծիծաղեց:

- Ճիշտ է՝ ճիշտ: Ճիշտ է ասում, Սեթա: Այն ջերմ չէր ու հաստատ տուն չէր:

Նա գլուխը տմբտմբացրեց:

- Բայց դա էր այն տեղն, ուր մենք ապրում էինք, - ասաց Սեթան: - Ընդհանուր առմամբ, մեր մտքին է գալիս, ուզենանք, թե չէ:

Նա մի փոքր դողաց: Նրա ձեռքով մի թելթել սարսուռ անցավ, որը նա շոյանքով հանգստացրեց:

- Դենվեր, - ասաց նա, - միացրու օջախը: Չեմ կարող ընկերոջը առանց հացի թողնեմ:

- Իմ համար նեղություն մի քաշի, - ասաց Փոլ Դին:

- Հացը նեղություն չի: Մանացածը բերել էլ եմ աշխատանքիս տեղից: Ամենաքիչը, որ կարող եմ անել, երեկոյից մյուս կեսօր, հետս կերակուր տուն բերելն է: Դեմ չես չե՞ գայլաձկանը:

- Եթե նա ինձ դեմ չի, ես իրան դեմ չեմ:

«Նորից» մտածեց Դենվերը: Նրանց մեջքով կանգնած՝ նա դուրս հրեց կաշանն ու գրեթե կորցրեց կրակը:

- Գիշերն էլ մնացեք, պարոն Գարներ: Դուք ու մաման ամբողջ գիշեր Ջերմ Տնից կարող եք խոսալ:

Սեթան երկու կտրուկ քայլ արեց դեպի օջախը, բայց նախքան կհասցներ Դենվերի վզից բռնել, վերջինս առաջ հակվեց ու սկսեց լաց լինել:

- Ի՞նչ է հետդ կատարվում: Քեզ երբեք էսպես չես պահել:

- Թող նրան, - ասաց Փոլ Դին: Ես անձանոթ եմ իրան:

- Հենց դա է: Ինքն անձանոթի մոտ իրեն ցույց տալու ոչ մի իրավունք չունի: Ահ, ձագս, ի՞նչ է եղել: Ինչ որ բա՞ն է պատահել:

Բայց Դենվերը ցնցվում էր ու հեկեկում ու խոսել չէր կարող: Այն արցունքները, որոնք ինը տարի շարունակ չէին թափվել, այժմ թրջում էին իր չափից շատ կանացի կրծքերը:

- Ես էլ չեմ կարա: Էլ չեմ կարա:

- Ի՞նչը: Ի՞նչը չես կարա:

- Չեմ կարող ապրել էստեղ: Ես չգիտեմ ուր գնամ կամ ինչ անեմ, բայց էստեղ ապրել չեմ կարող: Ոչ մեկ մեր հետ չի խոսում: Ոչ մեկ չի մտնում մեր տուն: Տղաներն ինձ չեն հավանում: Ոչ էլ աղջիկները:

- Ի՞նչ նկատի ունի, ոչ մեկ չի խոսում ձեր հետ, - հարցրեց Փոլ Դին:

- Տան պատճառով: Մարդիկ չեն...

- Չէ: Տան պատճառով չի: Մեր պատճառով, ու քո պատճառով:

- Դե՛նվեր:
- Պետք չի, Սեթա: Դժվար է աղջկա համար ապրել ուրվականով տանը: Հեշտ չի:
- Ավելի հեշտ է, քան որոշ բաներ:
- Մտածի, Սեթա: Ես մեծ մարդ եմ, ով ինչ ասես տեսել ու արել է, ու ես ասում եմ, որ հեշտ չի: Միգուցե լավ կլինի դուք բոլորդ տեղափոխվեք: Ու՛մ է պատկանում էս տունը:
- Դե՛նվերի ուսի հետևից Սեթան մի սառցե հայացք նետեց Փոլ Դիի վրա:
- Քե՛զ ինչ:
- Չե՛ն թողնում, որ հեռանաս:
- Չէ:
- Սեթա:
- Տեղափոխվել, հեռանալ չկա: Ոնց կա, եդպես լավ է:

- Ուզում ես ինձ ասես, լա՛վ է, երբ էս երեխայի ուղեղը կհսով չափ խանգարված է:

Տանն ինչ որ բան ձգվեց ու այնուհետև տիրած ականջալուր լռության մեջ Սեթան խոսեց.

- Ես մեջքիս ծառ ունեմ, տանս մեջ էլ ուրվական ու դրանց արանքում ոչինչ չկա բացի աղջկանիցս իմ գրկի մեջ: Էլ ոչ մի փախնել, ոչ մի բանից: Ես աշխարհի վրա էլ երբեք ոչ մի բանից չեմ փախնելու: Ես մի անգամ ուղևորության գնացի ու տոմսի համար վճարեցի, բայց քեզ մի բան ասեմ, Փոլ Դի Գարներ՝ ես շատ թանկ վճարեցի: Լսու՛մ ես: Ծատ թանկ վճարեցի: Իսկ հիմա նստի մեր հետ ճաշելու կամ մեզ հանգիստ թող:

Փոլ Դին իր բանկոնի գրպանում ծխախոտի փոքր պարկն էր փնտրում, կենտրոնացած շոշափելով դրա պարունակությունն ու թոկի հանգույցը, մինչ Սեթան Դե՛նվերին տարավ ընդհանուր սենյակ, որի մուտքը բացվում էր ընդհարձակ սենյակից, որում ինքն էր նստած:

Նա ծխախոտի թուղթ չուներ, այնպես որ ծալծեց պարկով՝ միաժամանակ բաց դռնից լսելով, թե ինչպես է Սեթան հանգստացնում դասերը: Երբ Սեթան վերադարձավ, խուսափելով Փոլ Դիի հայացքից, անմիջապես մոտեցավ օջախի կողքի փոքրիկ սեղանին: Նա մեջքով դեպի Փոլ Դիին էր կանգնած, ու վերջինս կարող էր (ուզածին չափ) դիտել նրա մազերը, առանց դեմքի միջամտության:

- Մեջքիդ ի՞նչ ծառ:

- Հը՞հ: Մեթան մի թաս դրեց սեղանին ու դրա տակից հանեց այուրը:

- Ի՞նչ ծառ է մեջքիդ: Ինչ-որ բա՞ն է անում մեջքիդ: Իմ տեսնելով բան էլ չի անում:

- Բայց մեկ է, էնտեղ է:

- Ո՞վ է քեզ էդ ասել:

- Սպիտակ աղջիկը: Էդպես կոչեց այն: Ես երբեք չեմ տեսել, ոչ էլ կտեսնեմ: Բայց ասեց, որ նման է Վայրի կեռասենու: Բունը, ճյուղերն ու անգամ տերևները: Պուճուր, մանր կեռասենու տերևների: Բայց դա տասնութ տարի առաջ էր: Հիմա կարող է կեռասներ էլ ունենա, ինչ իմանամ:

Մեթան ցուցամատը լեզվի ծայրով մի փոքր թքոտեց: Արագ ու քնքշորեն նրա մատները հավեցին օջախին: Ապա տրորվեցին այուրի մեջ՝ բաժանելով, անջատելով բլրակները ակոսներից, տիզ փնտրելով: Ոչինչ չգտնելով՝ Մեթան սողա ու աղ լցրեց ծավաճ բռի մեջ ապա երկու ձեռքին էլ ցանեց այուրի մեջ: Հետո ձեռքը մեկնեց պահածոյի տուփին ու շերեփով կես բուռ խոզի ճարպ հանեց: Ճարպկորեն տրորեց այուրը, հետո ձախ ձեռքով ջուր շաղ տվեց վրան ու ստացավ խմորը:

- Ես կաթ ունեի, - ասաց Մեթան: - Դենվերով հղի էի, բայց կաթ ունեի աղջիկ երեխուս համար: Ես դեռ չեի դադարել կաթ տալ նրան, երբ Հովարդի ու Բյուզերի հետ ճանապարհի դրեցի:

Այժմ նա գրտնակում էր խմորը իր փայտե գրտնակով:

- Բոլորը մինչև ինձ տեսնելը, արդեն հոտով էին զգում: Ու երբ ինձ տեսնեին, տեսնում էին կաթիլները զգեստիս վրա: Ի՞նչ կարող էի անել: Միակ բանը, որ գիտեի այն էր, որ պիտի կաթ հասցնեմ երեխուս: Ոչ մեկ նրան իմ պես չէր կերակրի: Ոչ մեկ նրան այդքան արագ կաթ չէր հասցնի կամ բերանից չէր վերցնի, երբ բավարար կերած լիներ ու դրա մասին չիմանար: Ոչ մեկ չգիտեր, որ խեղդվում էր, եթե ուսիդ վրա ուղիղ դիրքով էիր պահում, միայն եթե ծնկներիս վրա պռակած լիներ: Ինձնից բացի, ոչ մեկ չգիտեր այդ ամենը ու ինձնից բացի ոչ մեկ իր համար կաթ չուներ: Ես էդ ամենը վագոնի կնոջն ասեցի: Ասեցի, որ շաքարաջուր լցնեն կտորի մեջ ու տան ծծի, որ երբ մի քանի օր անց հասնեի, ինձ մոռացած չլիներ: Կաթը հասած կլիներ, ու դրա հետ նաև ես:

- Տղամարդիկ շատ բան չեն հասկանում, - ասաց Փոլ Դին՝ փոքր պարկը բանկոնի գրպանը հետ խցկելով, - բայց գիտեն մի բան, որ ծծկեր երեխան մորից երկար հեռու չի կարող մնալ:

- Ուրեմն գիտեն, թե ինչ բան է երեխեքիդ ճամփա գցելը, երբ դեռ կրծքերումդ կաթ կա:

- Մենք ծառից էինք խոսում, Սեթա:

- Ձեզ լքելուց հետո, էն տղաները եկան էնտեղ ու տարան իմ կաթը: Հենց դրա համար էին եկել էնտեղ: Ինձ կռացրեցին ու տարան կաթս: Ես տիկին Գարմերին պատմեցի: Նա այդ ուռուցքն ուներ ու ի վիճակի չէր խոսալ, բայց աչքերից առցունքներ էին գլորվում: Հետո էդ տղաները իմացան, որ մեղադրել եմ: Վարժապետը դրանցից մեկին ասեց, որ մեջքս բացի ու երբ փակեցին, ծառ անեց: Դեռ անում է:

- Քեզ մտրակե՞լ են:

- Ու կաթս են տարել:

- Քեզ ծեծե՞լ են հղի վիճակիդ:

- Ու կաթս են տարել:

Խմորի խոշոր սպիտակ գնդերը շարքերով տեղավորվեցին տապակի մեջ: Կրկին Սեթայի թաց ցուցամատը դիպավ օջախին: Նա բացեց օջախի դուռն ու տափակը սահեցրեց ներս: Երբ օջախի տաքությունից բարձրացավ, նա զգաց Փոլ Դինն իր հետևում ու նրա ձեռքերն իր կրծքի տակ: Սեթան ուղղվեց, և գիտեր, թեպետ չէր զգում, որ Փոլ Դինի այտը սեղված էր իր կեռասենու ճյուղերին:

Առանց ջանալու, նա դարձել էր այն տղամարդը, ով կարող էր տուն մտնել ու կանանց հուզել: Որովհետև իր հետ, իր ներկայությամբ, նրանք իրենց թույլ կտային: Երանելի ինչ-որ բան կար նրա վարվելակերպի մեջ: Կանայք տեսնում էին նրան ու ցանկանում արտասվել, պատմել նրան, որ իրենց կրծքավանդակը ցավում էր, ծնկները նույնպես: Ուժեղ կանայք և խոհեմ, տեսնում էին նրան ու պատմում բաներ, որ միայն միմյանց կպատմեին՝ որ դաշտանադադարից հետո կիրքն իրենց մեջ շեշտակիորեն դարձել էր վիթխարի, ագահ, ավելի վայրի քան տասնհինգ տարեկանում, և նրանք դրանից անհարմար էին իրենց զգում և տխրում էին: Պատմում էին, որ թաքուն փափագում էին մեռնել, ազատվել այդ ամենից, որ քունն իրենց համար ավելի թանկ էր, քան ամեն բացվող օրը: Երիտասարդ աղջիկները գաղտագողի մոտենում էին նրան խոստովանելու կամ նկարագրելու թե որքան ճոխ էին այցելությունները, որ հետևել էին իրենց երագներին:

Ուստի, թեպետ նա չգիտեր ինչու էր դա այդպես, բայց չզարմացավ, երբ Դենվերը արցունք թափեց օջախի մոտ: Ոչ էլ, երբ իրենից խլած կաթի մասին պատմելուց տասնհինգ բոպե անց, նրա մայրն արտասավեց: Սեթայի ետևում, կորանալով, իր մարմինը որպես բարության աղեղ, իր ձեռքերի ափերի մեջ պահեց Սեթայի կրծքերը: Իր այտերը քսեց Սեթայի մեջքին ու այդպիսով սովորեց նրա վիշտը, դրա արմատները, լայն բունն ու խճճված ճյուղերը: Մատները տանելով դեպի նրա զգեստի կեռիկները, Փոլ Դին գիտեր, առանց տեսնելու կամ հառաչանք լսելու, որ արցունքներն արագ էին թափվում: Ու երբ Սեթայի զգեստի վերին մասը հասավ իր ազդրերին, Փոլ Դին կարող էր տեսնել այն քանդակը, որն իր մեջքն էր դարձել՝ նման դարբնի նախշուն աշխատանքի, չափազանց կրքոտ ցուցադրության համար, ու կարող էր մտածել, առանց բարձրաձայնելու, «Աստված իմ, աղջիկ»:

Ու հանգիստ չէր ունենա, մինչև իր շուրթերով չդիպչեր դրա ամեն բլրակին ու տերևին, թեպետ Սեթան ոչինչ չէր զգա, քանի որ իր մեջքի մաշկը տարիներ շարունակ մեռած էր եղել: Բայց Սեթան գիտեր մի բան. որ պատասխանատվությունն իր կրծքի համար վերջապես մեկ ուրիշի ձեռքերում էր: